Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1670 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԹԻԿՆԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են թիկնապահների և պահնորդների պարտադիր վերապատրաստում (այսուհետ՝ վերապատրաստում) անցնելու հետ կապված հարաբերությունները:

2. Մասնագիտական գիտելիքների հետևողական կատարելագործման, աշխատանքի առաջավոր փորձի ուսումնասիրման, ինչպես նաև գործնական հմտությունների, ունակությունների ձեռքբերման և դրանք ամենօրյա պրակտիկ գործունեության ընթացքում կիրառելու նպատակով թիկնապահները և պահնորդներն անցնում են վերապատրաստում:

3. Սույն կարգի համաձայն վերապատրաստումն անցկացվում է տեսական դասընթացների, փորձի փոխանակման, սեմինար պարապմունքների, այդ թվում մասնագիտական հմտությունների գործնական ցուցադրման ձևերով:

4. Թիկնապահները և պահնորդները վերապատրաստում անցնում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ:

5. Վերապատրաստումն իրականացնում են իրավաբանական անձ հանդիսացող և համապատասխան կրթական գործունեության լիցենզիա ունեցող հաստատությունները (այսուհետ՝ վերապատրաստում իրականացնող հաստատություն):

6. Վերապատրաստումն անցկացվում է վերապատրաստում իրականացնող հաստատության և «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) նախատեսված՝ թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնելու թույլտվություն (լիցենզիա) ունեցող կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) միջև կնքվող պայմանագրի հիման վրա:

7. Վերապատրաստման ծրագիրը կազմվում է՝ ելնելով օրենքով սահմանված՝ թիկնապահական և պահնորդական գործունեության խնդիրներից: Վերապատրաստման ծրագիրը հաստատում է վերապատրաստում իրականացնող հաստատության ղեկավարը:

8. Վերապատրաստման խմբերը ձևավորվում են օրենքով նախատեսված՝ թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնելու թույլտվություն (լիցենզիա) ունեցող կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Վերապատրաստման դասընթացի ժամանակացույցը հաստատում է վերապատրաստում իրականացնող հաստատության ղեկավարը՝ համաձայնեցնելով տվյալ կազմակերպության հետ:

9. Վերապատրաստում իրականացնող հաստատությունում վարվում են ուսումնական մատյաններ, որոնցում յուրաքանչյուր օրվա համար կատարվում են նշումներ վերապատրաստվող անձանց ներկա կամ բացակա լինելու վերաբերյալ:

10. Վերապատրաստվող անձի՝ վերապատրաստման դասընթացների ավելի քան մեկ երրորդից անհարգելի բացակայության դեպքում վերապատրաստում անցած լինելը հավաստող վկայական չի տրվում:

11. Վերապատրաստման դասընթացներից վերապատրաստվող անձի հարգելի բացակայության դեպքում նրան հնարավորություն է ընձեռվում մասնակցելու ծրագրի՝ նույն թեմայով անցկացվող հաջորդ դասընթացներից որևէ մեկին:

12. Վերապատրաստման արդյունքում վերապատրաստում իրականացնող հաստատության կողմից անձին տրվում է վերապատրաստում անցած լինելը հավաստող վկայական,

որի պատճենը պահվում է վերապատրաստում անցած անձի գործատու կազմակերպությունում և կցվում նրա անձնական գործին:

13. Վերապատրաստում անցած լինելը հավաստող վկայականի ձևը հաստատում է վերապատրաստում իրականացնող հաստատության ղեկավարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1670 - Ն որոշման

Հ Ա Յ Տ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԹԻԿՆԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

_____ գործունեություն իրականացնող
(թիկնապահական, պահնորդական (նշել գործունեության տեսակը)

_____ կազմակերպության
(կազմակերպության անվանումը)

NN ը/կ	աշխատողի անունը, ազգանունը, հայրանունը	գործունեության ստաժը	քանի անգամ է վերապատրաստվել	վերջին վերապատ-րաստման վայրը և ամսաթիվը
1.				
2.				

Կազմակերպության ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ